

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ալկադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) տնտեսական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում Ակադեմիայի և դրա կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքները:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:

4. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Ակադեմիայի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. Բաժինն Ակադեմիայի ռեկտորի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների հետ:

6. Բաժնի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, Ակադեմիայի ռեկտորի հրամաններով և այլ իրավական ակտերով:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Բաժնի նպատակները և խնդիրներն են.

1) Ակադեմիայի և դրա կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքների, նյութատեխնիկական սպասարկման ապահովումը,

2) Ակադեմիայի բոլոր մասնաշենքերի շահագործման և դրանց ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացումը և կազմակերպումը,

3) Ակադեմիայի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների իրականացումը,

4) Ակադեմիայի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պետական գնումների անվանացանկերի կազմման աշխատանքներին մասնակցելը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Բաժնի գործառույթներն են.

1) Ակադեմիայի գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման և պահեստավորման աշխատանքների իրականացումը, հավատարմագրերով ստանալ Ակադեմիայի անվամբ ստացված գույքն ու ապրանքանյութական արժեքները,

2) Ակադեմիայի պահպանման ծախսերով նախատեսված կոմունալ-կենցաղային ծառայությունների ձեռք բերման պայմանագրերի կազմման և կնքման աշխատանքների վարումը,

3) Ակադեմիայի բոլոր մասնաշենքերի շահագործման և դրանց ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացումը և կազմակերպումը,

4) Ակադեմիայի գույքագրման աշխատանքների կատարումը,

5) Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների, սովորողների կողմից սպառած էլեկտրաէներգիայի և խմելաջրի ծախսերի օրական հաշվառման. ինչպես նաև՝ կապի ծառայությունների գծով ծախսերի հաշվառման վարումը,

6) կաթսայատների անխափան և անվտանգ շահագործման իրականացումը,

7) Ակադեմիայի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պետական գնումների անվանացանկերի կազմման աշխատանքներին մասնակցությունը,

8) Ակադեմիային սպասարկող ծառայողական ավտոմեքենաների ուղեգրերի լրացման և վառելանյութի ծախսի շարժի վարումը,

9) Ակադեմիային սպասարկող ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական գնման աշխատանքների իրականացումը:

IV. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Բաժնի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի ռեկտորը:

10. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից:

11. Բաժնի պետը հաշվետու է Ակադեմիայի ռեկտորին, վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորին:

12. Իր գործունեության ընթացքում Բաժնի պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, Ակադեմիայի կանոնադրությունով, սույն կանոնադրությամբ:

13. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի՝ սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացման համար:

V. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

14. Բաժնի աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանում է Ակադեմիայի ռեկտորը:

15. Բաժնի աշխատողների գործառույթները, մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատողների աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:

16. Անհրաժեշտությունից ելնելով՝ Բաժնի պետի առաջարկությամբ ռեկտորի կողմից Բաժնի կանոնադրական խնդիրների լուծման համար ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: